ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 213-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 192-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

որոշում եմ.

Հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 20/09/2022 թվականի, թիվ Կ-20092022-06-0127 կասեցման որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 5 սեպտեմբերի 2022 թվականի, «**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**
» թիվ 192-Ա որոշման հինգերորդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1 «**ջրամբար**»-ը փոխարինել «**ջրավազան**»-ով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., սեպտեմբերի 30,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 214-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0102-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՆՏԱՇՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, հողամասի հատակագիծը, Օձուն գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15/05/1991 թվականի թիվ 1 որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-0102-0008 ծածկագրով 0,12443 հեկտար մակերեսով, գյուղ Օձուն, փողոց 17 փակուղի 3 թիվ 9 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ ՍՈՒՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՆՏԱՇՅԱՆԻ՝ ծնված 28.02.1969թ. սեփականությունը:

2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

3. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., սեպտեմբերի 30,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

04 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 215-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0464-0061 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՏԻՏԱՆՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Նորոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 30.09.2022 թվականի N 65-Ա որոշման,

հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 19092022-06-0055, քաղաքացի ԱՇՈՏ ՏԻՏԱՆՅԱՆԻ համաձայնությունը՝

որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզ Օձուն համայնք գյուղ Օձուն, փողոց 42, թիվ 3 փոստային հասցեում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 06-112-0464-0061 կադաստրային ծածկագրով, **30.0** քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը **78660 /յոթանասունութ հազար վեց հարյուր վաթսուն/ ՀՀ դրամով** և ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, 0.1 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, հողամասը **514800 /հինգ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ** կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած (նախապատվության իրավունք ունեցող) անձին՝ **ԱՇՈՏ ՍՈՒՐԵՆԻ ՏԻՏԱՆՅԱՆԻՆ՝ ծնված 21/09/1964 թ.:**

2. Մեկամսյա ժամկետում Ա.ՏԻՏԱՆՅԱՆԻ հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր:

3.Սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2022թ., հոկտեմբերի 4

Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 216-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԳԵՍ ՀՐԱՉԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

որոշում եմ.

հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Վարդգես Հրաչիկի Գևորգյանի նկատմամբ պատրոնաժ սահմանելու» եզրակացությունը.

1. Քաղաքացի Վարդգես Հրաչիկի Գևորգյանի նկատմամբ (ծնված՝ 10/11/1959 թ., անձնագիր՝ AR0377201, տրված 14.07.2017 թ., 055-ի կողմից, վավեր է մինչև 14.07.2027 թ.,) սահմանել պատրոնաժ:

2. Պատրոն (օգնական) նշանակել քաղաքացի Դավիթ Վարդգեսի Գևորգյանին (ծնված՝ 17/12/19922 թ., անձնագիր՝ AR0543344, տրված 19.12.2017 թ., 055-ի կողմից, վավեր է մինչև 19.12.2027 թ.,) :

3. Պատրոնաժ սահմանելը չի հանգեցնում քաղաքացի Վարդգես Հրաչիկի Գևորգյանի իրավունքների սահմանափակման:

4. Քաղաքացի Վարդգես Հրաչիկի Գևորգյանի գույքը պատրոնը (օգնականը) կարող է տնօրինել նրա հետ կնքված հանձնարարության կամ հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա: Քաղաքացի Վարդգես Հրաչիկի Գևորգյանի ապրուստի ու նրա կենցաղային կարիքների բավարարմանն ուղղված կենցաղային և այլ գործարքները պատրոնը (օգնականը) կնքում է նրա համաձայնությամբ»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ.,հոկտեմբերի 5,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն